



POLICY  
FORUM  
ARMENIA

ՀԱՅՈՒԿՉԵԿՈՒՅՑ

# ՀԱՅԱՍՏԱՆ. ԿԱՆԻԿԵԼՎ ՏՆՏԵՍՎԿԱՆ ԱԴԵՏԸ



Այս գեկույցը պատրաստվել է PFA-ի  
մի խումբ անդամների և անկախ  
փորձագետների համատեղ շանթով:  
Չեկույցի հեղինակներն ու  
խմբագիրները որևէ փոխհատուցում  
չեն ստացել իրենց կատարած  
աշխատանքի համար: Ստորև  
ներկայացված գեկույցի հայերեն  
տարբերակը թարգմանությունն է  
Նույնանուն անգլերեն բնօրինակի:

## Փետրվար 2012թ.

© 2012 Policy Forum Armenia

Այս գեկույցի առանձին բաժիններ կարող են  
վերատպվել՝ համապատասխան  
թույլտվությամբ: Վերատպման դեպքում  
համապատասխան հղումը պարտադիր է:

Այցելեք մեզ՝ [www.pf-armenia.org](http://www.pf-armenia.org)  
Գրեք մեզ՝ [forum@pf-armenia.org](mailto:forum@pf-armenia.org)

# ՀԱՅԱՍՏԱՆԱԳԻՐ

Հայաստանը սկսում է դասական վճարային հաշվեկշռի ճգնաժամի (balance-of-payments crisis) նշաններ ցույց տալ: Փոխարժեքի փաստացի ֆիբսված լիմելը և վարվող կառուցվածքային բաղաբականությունը հանգեցնում են զգայի արտաքին անհավասարակշռության, որը ի վերջո կրերի փոխարժեքի կորուկ արժեգործման՝ լուրջ հետևանքների առաջ կանգնեցնելով բավականին խոցելի բանկային համակարգը և բացասաբար անդրադառնալով արդեն իսկ բարձր պետական պարտքի մակարդակի վրա: 2012-14-ին նախատեսված արտաքին պարտքի հսկայական վճարներն ու անբարենպաստ զարգացումները Եվրոպայում իրավիճակն է ավելի վատքար են դարձնում և կարող են արագացնել գործընթացը: Եթե տնտեսական բաղաբականության ուղղությամբ և բաղաբական-տնտեսական հարթությունում կորուկ փոփոխություններ տեղի չունենան, առաջիկ երեք տարիների ընթացքում դրամի զգայի արժեգործման և/կամ արտաքին պարտքի դեֆուլտի հավանականությունը մենք շատ բարձր ենք գնահատում:

2009 թվականին Հայաստանում գրանցվեց 2007-2008 թթ. համաշխարհային ճգնաժամին հաջորդած, աշխարհի վատագույն տնտեսական անկումներից մեկը: Սակայն եթե 2009-ի ելքը մեծապես պայմանավորված էր համաշխարհային տնտեսական ճգնաժամով, որի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա է ավելի ուժգնացվ ներքին ինտիրների պատճառով, ներկայումս ի հայտ եկողը հիմնականում երկրում առաջացած ինտիրների հետևանք է, որի բացասական ազդեցությունը մեծանում է արտաքին մի նոր ալիքի պատճառով: Սույն գեկույցի ուշադրության կենտրոնում են հենց այս ներքին ինտիրները, որոնց մեծամասնությունը ավելի շուտ բաղաբական կամքի հարթությունից է, քան կապված է ռեսուրսների պակասի կամ անբարենպաստ աշխարհագրության հետ: Վյստեղ մենք նաև մատնաշում ենք, որ տնտեսությունը չի ենթարկվել արտաքին ճշշման 2007-2008-ի ճգնաժամից հետո, և բավարար փաստարկներ կան՝ սպասելու նորանոր դժվարություններ, որոնք կուժգնանան Եվրոպայում կատարվող իրադարձությունների պատճառով:

Երկրի բաղաբական դեկավարությունը պետք է ամբողջապես յուրացնի այս ինտիրները և հրատապ կերպով զբաղվի դրանք լուծելով: Առաջմ թվում է, թե 2009-ի դասերը վատնվել են, և ոչ մի նշանակալի փոփոխություն չի իրականացվել բաղաբականության ոլորտում, ինչը կարող էր Հայաստանն ավելի պատրաստ դարձնել հավանական հաջորդ/զայիր զարգացումներին: Փոխարժեն կանային կապիտալիզմի բաղադրիչները, երբ փոքր թվով անհատներ ունեն անհամամասնորեն մեծ իշխանություն և տնտեսական որոշումների կայացման վրա մեծ ազդեցություն, առավել են ուժեղացվել, ինչը արվել է աճի, առաջընթաց, կրթության և զգային անվտանգության հաշվին: Սա ոչ միայն անբարոյական է, այլև անօրինական և պետք է փոխվի: Հայաստանի հնարավորությունների պատուհանը՝ կառուցելու մրցունակ տնտեսություն և որմանայելու սուր սոցիալական և ժողովրագրական ինտիրներին, արագործն փակվում է:

Երկրին սպառնացող մարտահրավերներին արդյունավետ դիմակայումը պետք է սկսվի լեզիտիմ իշխանությունների ձևավորմամբ, որոնք կկարողանան Հայաստանի ժողովրդի անունից վերահսկել նոր բաղաբական կուրսը: Գալիք պաշտամենական ընտրությունը տակա է հնարավորության այդ պատուհանը: Բնակչության կողմից իր ազատ կամքի դրսևորման և բարոյական արդարության մթնոլորտի ստեղծումը կնապաստի հանրային վստահության ամրապնդմանը, որն այլ հավասար պայմաններում ձեռնարկվելիք միջոցառումները կրաքնի ավելի արդյունավետ: Եվ հակառակը. ևս մեկ կեղծված ընտրությունն անկանած կիանգեցնի ավելի մեծ բաղաբական լարվածության, սոցիալական ցացումների և ավելի ծանր մարտահրավերների պասպայում, որոնցից շատերը այս անզամ կարող են անհայտահարելի լինել իշխող ռեժիմի համար: Ստեղծված իրավիճակը պահանջում է իսկական ազգային միասնության կառավարություն, որն ի հայտ կրերի իրագործելի օրակարգ և այն կյանքի կոչելու համար կներգրավի Հայաստանի և Սփյուռքի բոլոր կառուցողական ուժերին: Այս շանթերը կպահանջեն համապատասխան պրոֆեսիոնալ կարողություններ, բայց և իրապես զգային և մաքուր բաղաբական դեկավարության օժանդակությունը:

# ՆԱԽԱԲԱՆ

Ըստայնող  
հարկա-  
բյուջետային  
քաղաքականու-  
թյունը, որև  
իրականացվեց  
ահռելի արտաքին  
պարտքի հաշվին,  
ոչ միայն  
անարդյունավետ  
եր այլ նաև կարծ  
կյանք ունեցավ:

2011 թվականի դեկտեմբերի 8-ից 9-ը կայացած Եվրոպական Միության դեկավարների գագաթնաժողովը չտվեց սպասված արդյունքները: Չնայած Բրյուսելում ձեռք բերված համաձայնությունը մեծածավալ ֆինանսական ճգնաժամի կանխման հույսեր է ներշնչում՝ կանխատեսումները վկայում են, որ 2012 թվականին Եվրագործությունը ճգնաժամի մեջ կլինի՝ հետզհետե վերականգնվելով 2013 թվականին: Եվրոպական քաղաքական գործիչների արագ արձագանքը ճգնաժամային խնդիրներին բիշ հավանական է: Յաշվի առնելով օրեցօր տագնապալի դարձող իրադարձությունների չափը և նրանց հնարավոր հետևանքները՝ գլոբալ ֆինանսական համակարգի փլուզումը աներևակայելի չի թվում:

Եվրագործին Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է և հիմնական բյուջետային գրանտների ու միջապետական վարկերի ավանդական աղբյուրը: Եվրոպական տնտեսական գարգառումները, որոնք արդեն կանխատեսվել են միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից և որոնք դեռևս ակներև չեն, բայց կարող են հանկարծակի ի հայտ գալ, անկասկած կունենան լուրջ ազդեցություն ՀՀ տնտեսության վրա ուղղակի և անուղղակի դրսերումներով՝ ազդելով նաև Ռուսաստանի՝ Հայաստան ուղարկվող տրանսֆերտների ամենամեծ ծավալը ապահովող երկրի վրա: Տրանսֆերտներն անկասկած եղել և մնում են Հայաստանի անկայուն տնտեսությունը սնող կարևորագույն ֆինանսական ներփակությունը՝ համեմով տարր՝ համեմով տարեկան ՀՆԱ-ի մինչև 20%-ի:

2008 թվականի դեկտեմբերին լույս ընծայած իր Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա գեկույցում Policy Forum Armenia-ն նախանշել էր արդեն հսկ 2007 թվականի վերջին գլոբալ տարածում ստացած ֆինանսական ճգնաժամի՝ ՀՀ տնտեսությանը սպառնացող վտանգի մասին: Հայաստանի դեկավար մարմիններն անտեսեցին գեկույցում տեղ գտած տնտեսական բազմաբուվանդակ խորհրդների մեջ մասը՝ փոխարենն ընտրելով արտաքին պարտքով ֆինանսավորվող հարկարյուջետային խթանների մոտեցումը: Չնայած տնտեսության մեջ ֆինանսական միջոցների զգալի ներարկմանը՝ արդյունքը զարդուրելի էր՝ 14.2%-ով ՀՆԱ-ի անկում. ամենավատ կատարողականներից մեկն աշխարհում 2007-ից հետո: Ցավոք, քաղաքականության ուղղությունների առօւմով շատ բան չի փոխվել այն ժամանակից ի վեր:

Այս գեկույցը առաջ է գնում ևս մեկ քայլ. ի լրումն զուտ տնտեսական քաղաքականության ուղղված միջոցառումներին, որոնք կմեջմեն ճգնաժամի երկրորդ ալիքը ՀՀ տնտեսության վրա, մենք ի ցույց ենք հանում մի շարք տնտեսաքաղաքական խնդիրներ, որոնք եղել են 2008-2009 թվականների ընթացքում իրականացված անհաջող տնտեսական քաղաքականության պատճառ և դեռևս երկար տարիներ կիսափանեն տնտեսության կայուն աճը՝ անպատասխան մնալու դեպքում:

Զեկույցը ունի հետևյալ կառուցվածքը. մաս II-ն ի ցույց է հանում Հայաստանի՝ 2008 թվականի համեմատ ավելի թույլ տնտեսության խոցելի կողմերը: Այն ընդգծում է համաշխարհային ճգնաժամից ի վեր դիտված հիմնական անհամապատասխանությունները՝ մակրոտնտեսական քաղաքականության բնագավառում և դրանց բացասական ազդեցությունը հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Մաս III-ն առաջարկում է մանրամասն միջոցառումների ամբողջություն, որոնք, եթե ընդունվեն և իրագործվեն, կարճաժամկետ հատվածում կմեջմեն Եվրոպական ճգնաժամի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, իսկ միջնաժամկետ հատվածում կվերացնեն տնտեսության վրա իրենց ունեցած հիմնարար և կործանարար ազդեցությունը:

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

2012-ին

Դայաստանը  
պետք է մարի իր  
արտաքին  
վարկատուներին  
\$1մլրդ-ից ավելին  
որպես մայր  
գումարի  
վերադարձ և  
տոկոսավճար:

## Համախառն արտադրանք, սոցիալական իրավիճակ և գնաճ

2009 թվականի խորն անկումից հետո 2010-2011 թվականների տնտեսական աճի միջին ցուցանիշը կազմեց 3.3%, որը զգալիորեն ցածր էր մինչճգնաժամային տեմպերից՝ հանգեցնելով 2007 թվականի համեմատ 3ՆԱ-ի ավելի ցածր մակարդակի: Թույլ վերականգմանը նպաստել են գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտում արձանագրված աճի տեմպերը, մինչդեռ լճացած շինարարության ոլորտը զգալիորեն խոչընդոտել է տնտեսական աճին: Նշենք, որ գյուղատնտեսության ոլորտում արձանագրված աճը 2010 թվականի նշանակալի անկման ֆոնով էր պայմանավորված (2010 թվականի անբարենպաստ եղանակով պայմանավորված): Վրոյունաբերության աճը վերամշակող և հանքագործական ոլորտներում նկատված տնտեսական ակտիվության աճի հաշվին էր:<sup>1</sup> Ծառայությունների ոլորտը շահել է տրանսֆերտների աճից: Վրոյունքում, վերջին տարիներին արտահանելի հատվածը չի աճել բավարար տեմպերով, և տնտեսությունը հիմնվել է արտաքին ինսայություններով ֆինանսավորվող ներքին պահանջարկի վրա: Ընդհանուր առմամբ կաշառակերությունը, ադմինիստրատիվ հետապնդումները, պայմանագրերի թույլ կիրարկումը (weak contract enforcement) և անհավասար մրցակցային դաշտը շարունակում են խոչընդոտ լինել տնտեսական աճի համար:

Այս զարգացումները տեղի են ունեցել սոցիալական պայմանների կտրուկ վատթարացման ֆոնի վրա: Աղքատությունը 2008 թվականից աճել է կայուն տեմպերով: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ բնակչության 35.8 տոկոսը 2010 թվականին գտնվել է աղքատության գծից ներքև՝ ի համեմատ 2008 թվականի 27.6 տոկոսի (ԱՎԾ, 2011): Հաշվի առնելով աղքատության համեմատաբար ցածր պաշտոնական սահմանագիծը (ամսական \$89.7 յուրաքանչյուր մեծահասակի համար)<sup>2</sup> այս վիճակագրությունը հավանաբար թերագնահատում է ծանր սոցիալական վիճակում գտնվող մարդկանց իրական թիվը: Ընդհանուր առմամբ սոցիալական պահովության համակարգը անհամապատասխան է, և առկա են հաշվետվություններ, որոնք վկայում են Հայաստանում ինքնասպանության դեպքերի աճի մասին (IWPR, 2011): Գործազրկության պաշտոնական վիճակագրությունը ակնհայտորեն անհուսալի է, մինչդեռ ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ գործազրկ մարդկանց թիվը կտրուկ աճել է 2008 թվականից ի վեր: Այս երևույթը, 2008 թվականի և դրան հաջորդած դեպքերի հետ համատեղ, հասգեցրել են բնակչության արտահոսքի վերսկսման:

Գլոբալ պահանջարկի նվազումն ու հիմնական ապրանքների գնանկումը միջազգային շուկայում չեն արտացոլվել Հայաստանի գնաճային զարգացումներում, մինչդեռ աճի ուղղությամբ ցանկացած շարժ անմիջապես արտացոլվել է: 2009 թվականի սկզբին գնաճի տարեկան ցուցանիշը նվազեց մինչև մեկ տոկոս՝ միայն մասնակիորեն իր վրա կրելով համաշխարհային ապրանքային շուկաներում գների անկման ազդեցությունը: Սակայն արդեն 2009 թվականի վերջին գնաճը զգալիորեն արագացավ, թեև համաշխարհային գները համեմատաբար ցածր էին, իսկ պոտենցյալ մակարդակից 3ՆԱ-ի շեղումը՝ ավելի մեծ: Այսուհետև՝ 2010 թվականին, համաշխարհային ապրանքային շուկաներում գների աճը, զուգակցվելով ներքին տնտեսությունում գյուղատնտեսական ապրանքների թողարկման ցածր մակարդի հետ, եւկանորեն արագացրեց գնաճի տեմպերը՝ հասցելով 9%-ի:<sup>3</sup> Գնաճի նման վարդագիծը, այս է՝ աճի ուղղությամբ

<sup>1</sup> Հանքագործական արդյունաբերությանում աճի երկնշից ցուցանիշին նպաստել է մետաղների գների աճը, մասնավորապես՝ պղնձինը:

<sup>2</sup> Անկախությունից ի վեր միլիոնից ավելի մարդ է լրել Հայաստանը՝ դարձնելով այս աշխարհի համար առաջին մարդ արտահանող երկիրը, եթե հաշվենք որպես տոկոս սկզբանական բնակչության նկատմամբ (միևն միգրացիան):

<sup>3</sup> Գնաճի տարեկան տեմպերը դաշնադեպին 2011 թվականին՝ իրենց վրա կրելով նախորդ տարվա բարձր գնաճն ու 2010 թվականի համեմատ ավելի բարենպաստ բնակչության պայմանները գյուղմթերների թողարկման համար:

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՌԴՄԵՐԸ

ճշգրտումների արագ արտացոլում, իսկ նվազման ուղղությամբ՝ ոչ, խոսում է շուկայի կառուցվածքի բարձր կոնցենտրացվածության և/կամ գին սահմանելու շուկայական ուժ ունեցող տևակարող սուբյեկտների առկայության մասին։ Սա իրապես թուլացնում է մակրոտնտեսական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետությունը։ պահանջարկի խթանման ուղղված դրամավարկային ընդլայնումը կունենա անվանական ազդեցություն՝ մերկ գնաճը, այլ ոչ թե իրական ազդեցություն՝ ուղղված ՀՆԱ-ի իրական աճին։

## Հարկաբյուջետային զարգացումներ և պետական պարտք

Տնտեսական վերելքի տարիներին վարած ցիկլին համընթաց (procyclical) հարկաբյուջետային քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ երկիրը զրկվեց նախազգուշական ֆինկալ պահուստներ ստեղծելու հնարավորությունից, որոնք կարող եին մեղմել համաշխարհային տնտեսական անկման ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա։ Հայաստանը ճգնաժամին արձագանքեց ահրելի ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականությամբ, որն իրականացրեց արտաքին պարտքի հաշվին։ Սակայն ձեռնարկած քայլերը ոչ միայն հետ չպահեցին տնտեսությունը 2009 թվականի անկումից, այլ նաև ունեցան կարճատև ազդեցություն։<sup>4</sup> Եթե ավելին, նոր արտաքին պարտք՝ ուղղված խթանող քաղաքականության ֆինանսավորմանը (և կենտրոնական բանկի պահուստների վերականգմանը, տես Ներքում), կրկնապատկեց Հայաստանի պետական պարտքը 2009-2010 թվականներին և վերջնականապես խթարեց մոտ ապագայում պարտք վերցնելու տնտեսության կարողությունը։<sup>5</sup> Սա արդյունավետորեն սահմանափակում է փոխառության կամ երաշխիքներ տրամադրելու ճանապարհով կառավարության ուղղակի ներգրավվածությունը խիստ անհրաժեշտ ենթակառուցվածքային ծրագրերում (Ներառյալ նոր առողմակայանի կառուցումը)։<sup>6</sup> Համեմուն ՀՆԱ 40 տոկոսին՝ Հայաստանի պետական պարտքը մոտեցել է զարգացող երկրների համար պարտքի դեփուլտ սահմանագծին։<sup>7</sup> Պետք է նաև նշել, որ ի տարբերություն միևնույն ճգնաժամը կուտակած պարտք՝ նոր պարտքը ավելի բիշ արտոնյալ պայմաններով է ինչպես տոկոսադրույթի, այնպես էլ ժամկետայնության առօսմով։

Բացի պետական պարտքի մակարդակից՝ երկու լրացուցիչ հանգամանքներ կան, որոնք զգալի անհանգուստության տեղիք են տալիս։ Առաջինը պարտքի մարման գրաֆիկը խիստ անհանգուացնող է։ առաջիկա երեք տարիների ընթացքում (2012-14) Հայաստանը իր արտաքին վարկասուներին պետք է մարի \$1մլրդ-ից ավելին՝ որպես մայր գումարի վերադարձ և տոկոսավճար (տես Fitch Ratings, 2011), որից \$600 մլն՝ Վրժույթի միջազգային հիմնադրամին։<sup>8</sup> Նման ծավալի պարտքի սպասարկումը լրջորեն կհարվածի ՀՀ արտաքին պահուստներին և հարկաբյուջետային քաղաքականության ճկունությանը։ Առկա պարտքի

ՀՀ ԿԲ որդեգրած  
փաստացի  
ամրագրած  
փոխարժեքի  
քաղաքականությ  
ունը նպաստել է  
արտաքին  
պահուստների  
3/4-ի կորստի։

<sup>4</sup> ՀՆԱ-ի աճը 2010 թվականի երրորդ և չորրորդ եռամյակներին բացասական է եղել։

<sup>5</sup> Պարտքով վերցված միջոցների օգտագործումը (հատկապես մասնավոր հատվածի վերավարկավորումը) թափանցիկ չեղ՝ հաճախ ոչ հստակ տրամարանությամբ։


<sup>6</sup> Հաշվի առնելով առողմակայանի ակնկալվող փակվելը՝ նոր առողմակայանի կառուցումը ֆինանսավորելու համար նոր փոխառություններ վերցնելու կառավարության անկառողընթյունը լրացնուի ճշշում է գործադրում հարկահավաքման մակարդակի բարձրացման և բիզնես միջավայրի բարեւավան ուղղությամբ, որը հստավորություն կտա մոտ ապագայում ավելի շատ ներգետիկ ծրագրեր իրականացնել մասնավոր ֆինանսավորմամբ։

<sup>7</sup> Ֆինգերը և Մեկային (2007) ցույց են տվել, որ վերջին ժամանակների պետական պարտքի ճգնաժամերի մեջ մասը տեղի են ունեցել 39 տոկոսից բարձի պետական պարտքի մակարդակի պայմաններում։

<sup>8</sup> Տես **այստեղ** ԱՄՆ նկատմամբ Հայաստանի պարտքի վերաբերյալ (մին ՓՀԻ-ով)։ Այս աշխատությունը գրելու պահին ԱՄՆ դուլարի և ՓՀԻ միջև փոխարժեք մոտավորապես հավասար էր \$1.53/ՓՀԻ։

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

**Հայաստան. Պետական Պարտքի Պատկերը Տարբեր Ցնցումների Դեպքում  
(ԴՆՁ ՏՈԿՈՍ)**



Աղյուրը՝ IMF (2011) և PFA -ի հաշվարնկեր.  
Նշում՝ տես հավելվածը այստեղ բերված հաշվարկների և ցնցումային սցենարների մասրամասների համար:

անհավասարակշռությունների պայմաններում ինչ-որ եղանակով պարտքի վերածնակերպումը թվում է անխուսափելի:<sup>9</sup> Հավանաբար սա ավելի կարի ներքին սոցիալական և տնտեսական իրավիճակը՝ ել ավելի խարարելով ՀՀ դիրքը տարածաշրջանում: Երկրորդ Հայաստանի պարտքի կառուցվածքը շատ զգայուն է շոկերի նկատմամբ, հատկապես՝ հավանական ՀՆԱ-ի և փոխարժեքի շոկերի: Ըստ մեր կատարած գնահատականների (տես Ներքում բերված գնապատկերը և հավելվածում ներկայացված այլուսակը)<sup>10</sup> ՀՆԱ թերևնակի անկումը 2012 թվականին (որը բոլորովին է բացառված չ' հաշվի առնելով արտաքին միջավայրի սպասվող վատթարացումը և հսկա անհավասարակշռությունները, որոնք Հայաստանը պետք է վերացնի) կարող է հանգեցնել պարտք/ՀՆԱ գործակի ավելի քան 50 տոկոսի: Քանի որ Հայաստանի պարտքի մոտ 90 տոկոսը արտահայտված է արտաքինայութեամբ, հեռանկարը ավելի վատ կլինի, եթե փոխարժեքը կտրուկ արժեգործվի: 30 տոկոս արժեգործման պայմաններում ՀՀ պարտք/ՀՆԱ գործակիցը կհանի 60 տոկոսի: Համատեղ շոկերի պարագայում, եթե ՀՆԱ անկումը և արժեգործումը միացալ հանդես գան, պարտք/ՀՆԱ գործակիցը կգերազանցի 70 տոկոսը:

<sup>9</sup> Սա կարող է տեղի ունենալ՝ չնայած նրան, որ պարտքի մեծ մասը վերցված է պաշտոնական վարկատուններից:

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՌԴՄԵՐԸ

Անհանգստացած վատթարացող պարտքի և 2009 թվականից ի վեր տնտեսության վերականգնման դաշնադիր տեմպերի հեռանկարներով՝ կառավարությունը 2011 թվականին իրականացրեց հարկաբյուջետային կոնսոլիդացում: Նման վաղաժամ համախմբման հիմնական բնորոշչիները նրանք են, որ բռն ամբողջությամբ ընկնում է ծախսումների փոքր ընթացիկ և կապիտալ: Ծախսումների զգալի մասը իրական արտահայտությամբ սարեցված է դեռևս 2009 թվականից ի վեր, իսկ կապիտալ ծախսերը սահմանափակ են: Գրեթե ոչինչ չի արվել եկամուտների հավաքագրման ուղղությամբ, որի արդյունքում հարկեր/ԲՆԱ հարաբերակցությունը մնում է ցածրերից մեկը ԱՊՀ-ում՝ արտահայտելով ոչ թե հարկերի ցածր դրույթների առկայություն, այլ պարզապես հարկերից խոսափելու բարձր աստիճան: Ի դեպք, հարկային դրույթների մեծ մասը համապատասխանում կամ նույնիսկ գերազանցում է տարածաշրջանային և մի շարք այլ երկրների հարկադրույթները, որոնք ունեն բարձր հարկեր/ԲՆԱ ցուցանիշ (տես Աղյուսակ):<sup>10</sup>

## Աղյուսակ: Հարկային մուտքերն ու հարկերի դրույթները, 2011թ.<sup>11</sup>

	Հարկային եկամուտներ (տոկոս ՀՆԱ-ում)	Զեռնարկության շահութահարկ (տոկոս)	Ավելացված արժեքի հարկ (տոկոս)
ՀԱՅԱՍՏԱՆ	<b>16.3</b>	<b>20</b>	<b>20</b>
ՉԻԼԻ	<b>18.1</b>	<b>20</b>	<b>19</b>
ԿԻՊՐՈՍ	<b>25.9</b>	<b>10</b>	<b>15</b>
ՎՐԱՍՏԱՆ	<b>24.9</b>	<b>15</b>	<b>18</b>
ԻՈԼԱՆԴԻԱ	<b>44.3</b>	<b>12.5</b>	<b>21</b>
ԼԱՏՎԻԱ	<b>27.7</b>	<b>15</b>	<b>22</b>
ՄՈԼԴՈՎԱ	<b>31.4</b>	<b>15</b>	<b>20</b>
ՊԱՐԱԳԱՎ	<b>14.1</b>	<b>10</b>	<b>10</b>
ՌՈՒՄԱՆԻԱ	<b>28.2</b>	<b>16</b>	<b>24</b>
ՌՈՒՍԱՍՏԱՆ (ՌԴ ՆԱԿԹԱԳԵՒՆ)	<b>22.1</b>	<b>20</b>	<b>18</b>
ՍԵՐԲԻԱ	<b>33.7</b>	<b>10</b>	<b>18</b>

Ներկայիս  
գերարժնորկած  
փոխարժեքը  
վեատում է  
Հայաստանի  
արտահանման  
ներուժին,  
հետաձգում է  
անհրաժեշտ  
ճգրտումը, և  
թաքցնում է  
իրական  
(արտաքին)  
պարտքերի  
պատկերը:

<sup>10</sup> Այս հարցի շուրջ ավելի շատ տեղեկատվություն կարելի է գտնել Davoodi and Grigorian (2007), ինչպես նաև IMF (2010) աշխատություններում:

<sup>11</sup> Աղբյուրը՝ հարկային եկամուտներ/ԲՆԱ ցուցանիշները ԱՄՀ տարբեր հաշվետվություններում, տես [այստեղ](#), շահութահարկի թվերը՝ բացառությամբ Կրաստանի և Մոլդովայի, "Զեռնարկությունների և անուղղակի հարկերի հարցում 2011", KPMG (2011): Կրաստանի համար տես [այստեղ](#); Մոլդովայի համար՝ [այստեղ](#): Ավելացված արժեքի հարկի վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է [այստեղից](#):

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

**Փինանսական  
համակարգի  
իրավիճակը  
անհանգուացնող  
է և ռիսկերի  
կուտակում է  
նախանշվում:**

Մեծ է մտավախությունը հարկային և մաքսային մարմինների կաշառակերության, ինչպես նաև պետական պաշտոնյանների հետ փոխկապված օլիգարքներին չհարկման առումով։ Յարկահավաքման բարելավման համար ներդրած շանքները հիմնականում ուղղված են բարձր եկամուտներ ստացողներին ավելի բարձր դրույթով հարկելուն և փոքր ու միջին ծեռնարկություններից հարկահավաքում ավելացնելուն, որոնցից շատերն արդեն ենթակա են կամ հարկային գերավճարների, կամ հարկահավաքման այլ՝ ոչ ավանդական եղանակներին։ Ի հակադրություն սրան՝ բարձաստիճան պաշտոնյանները և ԱԺ երեսփոխանները, որոնք իսկապես հարուստ են, սակայն հայտարարագրում են իրենց եկամուտների և հարստության չեխին մասը, կմնան հարկային մարմինների ուշադրությունից հեռու։ Ծանոթագրությունը ցանկությունը կազմում է շատ բարձր (մոտ 80 տոկոս)՝ հնարավորություն ստեղծելով զգակի կաշառակերության համար։ Արդյունքում տարեկան 100 միլիոնավոր դոլարներ յուրացվում են հարկերի ըմբառման և բյուջետային միջոցների ուղղակի յուրացման տեսքով (PFA, 2010; Box 6):

## Դրամավարկային, փոխարժեքի քաղաքականություն և Փինանսական հատված

Ճգնաժամի սկսվելուց ի վեր դրամավարկային քաղաքականության առաջնահերթությունները հաճախակիորեն փոփոխվել են, և Կենտրոնական բանկի արձագանքը գնաճին ծագվել է։ Փաստորեն, ճգնաժամի սկսվելուց ի վեր Կենտրոնական բանկը թողել էր գնաճի կարգավորման իր քաղաքականությունը և անցում կատարել թողարկման ծավալների կարգավորմանը։ Այս նաև հակադրությել է իր չհայտարարած նպատակին՝ փոխարժեքի ամրագրմանը (որը դրամավարկային քաղաքականությունից կապահանջեր լինել պասիվ և հետևել նվազող փողի պահանջարկին) և այդպիսով նպաստել է արտաքին պահուստների կորստին (տես Ներքևում):<sup>12</sup> Սա, ամենայն հավանականությամբ, քաղաքական նկատառումներով պայմանավորված՝ կենտրոնական բանկի գործառնական անկախության բացակայության արդյունքն էր։ Սակայն միգուցե գիտակցելով, որ իր քաղաքականությունը նպաստել է գնաճի սպասումներին, խոչընդոտել է գների դեպի ներքև ճշգրտմանը և հանգեցրել պահուստների կորստին՝ այս ամենը տևականության վերականգնմանը նպաստելու փոխարեն՝ Կենտրոնական բանկը վերադարձել է գնաճի նպատակադրմանը։ 2010 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում կենտրոնական բանկը բարձրացրել է տոկոսադրույթը 2.25 տոկոսային կետով։ Սակայն այս ժամանակ արդեն գնաճային մնջումները կամ վերացել են, կամ փոխել են իրենց ուղղությունը։

Չնայած փոխարժեքի ճնշումներին՝ ՀՀ ԿԲ որդեգրած, փաստացի ամրագրած փոխարժեքի քաղաքականությունը հանգեցրել է արտաքին պահուստների նշանակալի կորստի։ Փոխարժեքի միանգամյա՛ մոտ 20 տոկոս արժեզրկումը 2009 թվականի մարտին, որը իրականում նախապայման եր ԱՄՆ արտակարգ իրավիճակի օգնության ծրագրի համար, ժամանակավոր թուլացրեց փոխարժեքի ճնշումները։ 2009 թվականի վերջին փոխարժեքի ճնշումները վերսկսվեցին։<sup>13</sup> Ըստհանուր առմամբ ՀՀ

<sup>12</sup> Արտաքիւյրի ամրագրված/ֆիբսված փոխարժեքի պայմաններում դրամական բազայի ցանկացած ընդլայնում փողի պահանջարկից ավելի հանգեցնում է արտաքին պահուստների կորստին։

<sup>13</sup> Մեր կարծիքով՝ IMF (2011)-ի լավատեսական գնահատականները վկայում են փոխարժեքի գերածնորված լինելու մասին (10-15 տոկոս; տես էջ 5-որ), որի վերացումը դեռ կապահանջ նշանակալի արժեզրկում (կախված ներքին գներին փոխարժեքի փոփոխության փոխանցման աստիճանից)։

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՌԴՄԵՐԸ

ԿԲ-Ն կորցրել է \$1.2 մլրդ կամ մինչ ճգնաժամը իր համախառն արտաքին պահուստների 3/4-ը, որից մոտ \$0.5 մլրդ վատում է 2009 թվականի մարտի արժեգույնից հետո: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ԿԲ գործառնություններն արտարժույթի շուկայում ասիմետրիկ են. այն կտրուկ արձագանքում է արժեգույն ճնշումներին, մինչդեռ թույլ է տալիս, որ սեզոնային բնույթ կրող զգալի արժևորման ճնշումները իրենց արտացոլումը գտնեն փոխարժեքում:

Ներկայիս գերարժենորված փոխարժեքը վնասում է Յայաստանի արտահանման ներուժին, հետաձգում է անհրաժեշտ արտաքին ճշգրտումը և թաքցնում իրական (արտաքին) պարտավորությունների պատկերը: 2010-11 թվականներին դիտված ճշգրտումը հիմնականում արդյունք էր հարկարգությունային համախմբան և մետաղների գների աճի, ոչ թե մասնավոր հատվածի սպառման կամ ներդրումների վարքագիր: ՀՀ ԿԲ-Ն այնուում է, որ հիմնական տրամաբանությունը փաստացի ամրագրած փոխարժեքի ներքո այլ գործոնների շարքում արտաքին գների շոկերից առաջացած գնաճային ճնշումների կառավարումն է (տես IMF, 2011): Այն բանից զատ, որ ամրագրած փոխարժեքի ռազմավարությունը գնաճային ճնշումների կառավարման լավագույն մեթոդը չէ՝ առկա է նաև եմպիրիկ փաստարկ, որ “լողալու վախճ” (և արդյունքում ամրագրած փոխարժեքը) կարող է իրականում ուժեղացնել արտաքին գների շոկի փոխանցումը ներքին գներին, մինչդեռ լողացող փոխարժեքի ռազմավարությունը կարող է օգնել արտաքին շոկերի կյանմանը (տնտեսական գործոնների գների ճնշումների և շահույթի չափերի հաշվին): Դեռ ավելին, այն փաստը, որ ՀՀ ԿԲ-Ն շարունակում է ոչ սիմետրիկ միջամտությունները արտարժույթի շուկայում անգամ այն ժամանակ, երբ գնաճային ճնշումները վերացել են, վկայում է, որ հավանաբար այլ գործոններ են որոշում փոխարժեքի ռազմավարությունը (օրինակ՝ իշխանությունների հետ սերտաճած ներմուծողներին աջակցելու համար փոխարժեքը արհեստականորեն պահել գերարժենորված):

Չնայած ֆինանսական համակարգի գործունակության վերաբերյալ պաշտոնական պնդումներին՝ իրավիճակը անհանգստացնող է, և ռիսկերը կուտակվում են: Նախ, 2009 թվականի անկման հետևանքները սկսել են երևալ ժամկետանց վարկերի դիմամիկայում: Չնայած այն հանգամանքին, որ պաշտոնապես հրապարակված չաշխատող վարկերի մակարդակն աճում է՝ բանկերի վարկային պորտֆելի իրական որակը քողարկված է նաև վարկերի դասակարգման մեջմ չափանիշների ներքո:<sup>14</sup> Երկրորդ, մինչդեռ ամենուր վարկավորման ծավալները կտրուկ նվազել են, Յայաստանի բանկային համակարգը ականատես է եղել վարկավորման լայնածավալ աճի 2008 թվականից սկսած,<sup>15</sup> որի հիմնական մասն իրականացվել է արտաքին փոխառությունների հաշվին՝ բանկերի մոտ կուտակելով մեծածավալ պարտք արտասահմանյան վարկատունների նկատմամբ:<sup>16</sup> Վարկերի կտրուկ աճի պատճառով նրանց որակը մնում է կասկածելի:<sup>17</sup> Երրորդ, աճի մեծ մասը պայմանավորված է եղել արտարժույթային վարկերի աճով (կազմելով ընդհանուր վարկերի 60 տոկոսը՝

**Վերջին  
տարիների  
տնտեսական  
քաղաքա-  
կանության  
հիմնական  
թերությունը  
կայանում է  
շոշափելի  
արտաքին  
ճշգրտում  
ապահովելու  
անկարողության  
մեջ:**

<sup>14</sup> Յայկական բանկերից պահանջվում է դասակարգել վարկերը որպես կրուստ այն ժամանակ, երբ նրանց գծով վճարումները չեն կատարվել 270 օր: Արևելյան Եվրոպայի հիմնական երկրներում վարկերը համարվում են կրուստ 180 օր չաշխատող լինելուց հետո:

<sup>15</sup> Մասնավոր հատվածի վարկավորումը աճել է 37 տոկոսով մինչև 2011 թվականի սեպտեմբերը 2010 թվականի նոյյն ժամանակի համեմատ (IMF, 2011):

<sup>16</sup> Մինչդեռ դրանց մի մասը հնարավոր է, որ փոխառությամբ վերցվել է ոչ ֆինանսական մասնավոր հատվածի կողմից, IMF (2011)-ն գլամատել է, որ ՀՀ մասնավոր արտաքին պարտքը կազմել է \$2.9 մլրդ 2011 թվականի վերջին:

<sup>17</sup> Վարկավորման մեծածավալ աճը կարող էր հավանաբար տնտեսության խթանման կառավարության ծրագրի մի մաս լինել, որի համար նրանք փոխկապակցված բանկերին կարգադրել են փոխառություն վերցնել արտասահմանից:

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

ըստ IMF (2011)-ի; այսուսակ 4), որը ավելացրել է համակարգի խոցելիությունը դրամի հավանական արժեզրկման նկատմամբ: Ավանդների դոլարիզացիան նույնպես մնում է բարձր՝ սահմանափակելով դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը: Չորրորդ, բանկային համակարգի սեփականության կառուցվածքը շատ մշուշոտ է, որը արդյունք է համակարգում մրցակցության բացակայության և բանկերի կողմից ներկայումս գանձվող բարձր տոկոսային հավելադրերի: Բանկերի սեփականատիրական կառուցվածքի խիստ քաղաքականացված բնույթը սահմանափակում է ՀՀ ԿԲ անկախությունը և նրա վերահսկողական ֆունկցիայի իրականացման կարողությունը, իրավիճակ, որից թվում է, թե ՀՀ ԿԲ-ն առանձնապես դժգոհ չէ:

## Արտաքին անհավասարակշռություններ

Տնտեսությունը շատ ավելի խոցելի է ընթացիկ և կապիտալ հաշվի շուկերի նկատմամբ (որոնք կարող են առաջանալ եվրոպական իրադարձությունների արդյունքում) 2008 թվականի համեմատ: Հայաստանը Արևելյան Եվրոպայի միակ երկիրն է Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի երկրների շարքում, որի ընթացիկ հաշվի պակասուրդը ավելի մեծ է, քան մինչ ճգնաժամը: Ըստ գնահատականների՝ ՀՀ ընթացիկ հաշվի մասցրող հատել է ՀԱՀ 12 տոկոսի սահմանը 2011 թվականին՝ անհամեմատ ավելի վատ, քան 2008 թվականին նախորդած հինգ տարիների համար գրանցված 3.3 տոկոս միջին ցուցանիշը: Ավելացվում է, որ պակասորդը կվազայի միայն չափավոր գալիք տարիների ընթացքում: ՀՀ առևտորային հաշվի դեֆիշտը սպասվում է, որ կիասնի անսախադապ բարձր՝ ՀԱՀ 21 տոկոս մակարդակի: Ներմուծումը կգերազանցի արտահանումը մոտ 4 անգամ՝ ի հեճուկս 2009 թվականից ի վեր մետաղների և հանքահումքային ապրանքների արտահանման նշանակալի աճին:<sup>18</sup> Վերջինս, սակայն, բարելավված մրցունակության արդյունք չէր (կամ ՀՀ տնտեսության արտաքին ճշգրտման), այլ պայմանավորված էր արտաքին պահանջարկով և բարձր գներով: Վերջին տարիների տնտեսական քաղաքականության հիմնական թերությունը շշշափելի արտաքին ճշգրտում պահպեն անկարողությունն է, որը տնտեսությունը դարձրել է արտաքին ցնցումների նկատմամբ ավելի խոցելի, քան մինչ համաշխարհային ճգնաժամն եր:

Ընթացիկ հաշվի զգալի պակասուրդը ֆինանսավորելու համար Հայաստանն ունի երեք այլընտրանք. այն կարող է ներգրավել արտաքին մասնավոր ներդրումներ, հայթայթել պաշտոնական վարկեր կամ օգտագործել ԿԲ-ի միջազգային պահուստները: Խարիսուլ ներդրումային միջավայրը, պայմանագրերի թույլ կիրարկումը և բնակչության նվազող գնողունակությունը<sup>19</sup> կազդեն արտաքին մասնավոր ներդրումների ներգրավելու տնտեսության ունակության վրա: Դեռ ավելին, Հայաստանը շարունակում է կտրված մաս մասնավոր կապիտալի շուկայից, և հաշվի առնելով գլոբալ միջավայրը՝ թիւ հավանական է, որ մոտ ժամանակներու ի վիճակի կիրակի միջազգային պետական պարտադիմուներ թողարկել հարկարյուշետային քաղաքականության տեսանկյունից ընդունելի տոկոսադրդույթը: Ինչ վերաբերում է պաշտոնական ֆինանսավորմանը, Հայաստանը գրեթե հասել է միջազգային

<sup>18</sup> Եվրոպական անկախությունը նվազման ուղղությամբ մշշում կգործադրի մետաղների միջազգային գների վրա, որը կունենա քացանական հետևանքներ ՀՀ համար, որտեղ համբարդունաբերության հատվածը միայն կարևոր գործոնն էր՝ ընկած 2009 թվականից հետո տնտեսական վերականգնման հիմքում՝ կազմելով արտահանման 60 տոկոսը: Ի լրում, եթե ճգնաժամը Եվրոպայում փոխանցվի Ռուսաստան, Հայաստան փոխանցվող տրանժերությունը գագահիրեն կկրծատվեն: 2009 թվականին մասնավոր տրանժերությունը նվազել է մոտ 30 տոկոսով, որը 2009 թվականի ՀԱՀ անկման հիմքում ընկած հիմնական գործոնն էր:

<sup>19</sup> Սա նույնպես պայմանավորված է բնակչության զգալի արտահոսքով, որը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, վերջին 2-3 տարիներին արագացել է:

# ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՑԵԼԻ ԿՌԴՄԵՐԸ



Ֆինանսական կազմակերպություններից փոխառություն վերցնելու իր սահմանագծին (Համաշխարհային բանկ և ԱՄՆ), մինչեւ իր ավանդական երկողմանի վարկատուն/դրամաշնորհներ տրամադրողը՝ Եվրոպան, ունի իր սեփական ինսդիրների շարքը, որը բիշ հավանական է դարձնում Հայաստանի Եական վարկավորումը մոտ ապագայում:<sup>20</sup> Արդյունքում, միակ հնարավոր այլընտրանքը մնում է ՀՀ ԿԲ արտաքին պահուստների օգտագործումը տնտեսական խաթարման ժամանակ: Սակայն ինդիրն այն է, որ արտաքին պարտքի վճարման գրաֆիկը հաջորդ երեք տարիների ընթացքում կրճատում է այս տարբերակի իրականանալիությունը նույնպես:<sup>21</sup> Թույլ արտաքին պահուստների ծածկույթը շատ հավանական կդարձնի դրամի նշանակալի արժեգործումը (նման 2009 թվականի մարտին տեղի ունեցած արժեգորկմանը) մոտ ապագայում:

<sup>20</sup> Միև որս Հայաստանը գգայիրեն կախված է միշագգային ֆինանսական ինստիտուտների ֆինանսական տեղաբաշխումներից ինչպես վճարային հաշվեկշռի, այնպես էլ հարկարյուշետային պակասորդի ֆինանսավորման առումներով:

<sup>21</sup> Ըստ զահատականների՝ ՀՀ ԿԲ արտաքին պահուստները 2011 թվականի վերջի դրությամբ նվազել են \$1.8 մլրդ՝ համեմատած 2009 թվականի դեկտեմբերի վերջի՝ \$2.0 մլրդ-ի հետ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Տնտեսաքաղաքական նկատառումներ

Տնտեսության առջև ծառացած էական տնտեսական մարտահրավերների արդյունավետ կառավարումը պետք է սկսվի օրինական իշխանությունների ձևավորմամբ, որն այդ մարտահրավերների կառավարումը կիսկի Հայաստանի քաղաքացիների անունից: 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունները տրամադրում են այդ պատուհանը: Բնակչությանը կողմից իր ազատ կամքի դրսերման և բարոյական արդարության մթնոլորտի ստեղծումը կապաստի հանրային վստահության ամրապնդմանը, որն այլ հավասար պայմաններում ձեռնարկվելիք միջոցառումները կուտածի ավելի արդյունավետ: Եվս մեկ կերծված ընտրություն անկասկած կտանի քաղաքական լարվածության աճի, սոցիալական կատակիզմների և շատ այլ մարտահրավերների մոտ ապագայում, որոնցից շատերն իշխող ռեժիմի համար կարող է անկառավարելի լինել:

Կառավարությունը պետք է անհապաղ շրջանառության մեջ դնի ազգային ծրագիր, որը վերջ կդնի սոցիալական դժվարություններին և տնտեսությունը կուղղորդի խելամիտ աճի ճանապարհով: Նախապայմանները ներառում են, ամենազլիավորը՝ (i) վստահելի պլան մշակել ապրանքների և ծառայությունների արտադրության և ներմուծման շուկաներից մենաշնորհների վերացման համար, (ii) սահմանել բոլոր ձեռնարկատերերի համար հավասար խաղի պայմաններ և (iii) նվազեցնել օլիգոպոլիսերի առնչությունը տնտեսական քաղաքականության մշակման գործընթացին: Ծրագիրը պետք է լուծի նաև հետևյալ խնդիրները՝ (i) հարկածավաքման խնդիրները, որը հնարավորություն կընծերի բյուջեի ծախսերը ուղղել սոցիալական ապահովության համակարգի, պետական ներդրումների, կրթության և առողջապահության վրա, (ii) ֆինանսական համակարգի անկատարությունները, որը կնվազեցնի տոկոսադրույթները (վարկավորման) և (iii) կաշառակերություն և ադմինիստրատիվ հետապնդումները:

Վերջ նշված միջոցառումների արդյունավետ իրականացման համար կառավարության ամբողջական վերակազմավորում է անհրաժեշտ: Ներկայիս կառավարությունը՝ որպես ամբողջություն, գործի է տեսլականից, կարողություններից և տոկունությունից վերջ նշված անհանգուտությունները վերացնելու համար: Ի լրումն կառավարության վերաձևավորմանը, ինչպես առաջարկել ենք մեր 2008 գեկույցում, պետք է կազմավորվի ճգնաժամի կանխարգելման թիմ (ՃԿԹ)՝ որպես կառավարության առջևներ քաղաքականության խորհրդատվական բարձրագույն մարմին: ՃԿԹ-ն կարող է հաշվետու լինել անմիջապես վարչապետին և պետք է բաղկացած լինի տնտեսագետներից և ֆինանսական հատվածի մասնագետներից, որոնք ունեն բարձր հեղինակություն և ճգնաժամի կառավարման փորձ: Բարձր վարկուսակիւթյուն ապահովելու համար ՃԿԹ-ն կարող է ընդգրկել սկիուռքահայ (և անգամ ոչ հայ) մասնագետների և պետք է լինի վերկուսակցական:

Հասարակության վստահությունը ձեռք բերելու համար անհրաժեշտ է իրականացնել արդարադատության համակարգի վստահելի բարեփոխումներ, որը իր հերթին կպահանջի հեռանկարային միջոցառումներ գիշավոր դատախազի գրասենյակի և արդարադատության նախարարության ամենավերները, ինչպես նաև դատական համակարգը մաքրելու համար:

Կաշառակերությունը Հայաստանում անուններ և հասցեներ ունի, որոնցից շատերը պատկանում են մարդկանց, որանք բավականին բարձր են կանգնած իշխանության միջանցքներում: Որքան հնարավոր է շուտ պետք է նախաձեռնել հետապնդման գործընթաց այն բարձրաստիճան պետական պաշտոնյաների նկատմամբ, որոնք օգտագործել են պաշտոնական դիրք՝ անձնական հարստություն կուտակելու նպատակով, և ակնհայտորեն վարել են այնպիսի ապրելակերպ, որը հնարավոր չէր լինի ապահովել իրենց պաշտոնական եկամուտներով: Սա ուժեղ ազդանշան կդառնա բարեփոխումների վերաբերյալ և բավականին արագ իր արտահայտությունը կգտնի բիզնեսի և ադմինիստրատիվ միջավայրի բարելավման մեջ, քանի որ կոռումպացված պետական պաշտոնյաները իրենց կաշառքները հիմնականում ստանում են՝ կամ անուղղակիորեն բիզնեսներում սեփականություն ունենալով, կամ

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

որոշակի վճարների դիմաց այլոց բիզնեսներին հովանի տրամադրելով։ Բացի նրանից, որ այս երևույթը անօրինական և անբարոյական է՝ նման գործողությունները խաթարում են խաղի հավասար պայմանները և խոչընդոտում ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխմանը։

**Փողերի լվացման դեմ պայքարը** կրիտիկական կարևորություն ունի։ Բարձրաստիճան պաշտոնիա-ներից շատերը տնօրինում են բարձր շահութաբեր ընկերություններ, որին նրանք հաստի են Հայաստանից գումարներ դուրս փոխանցելով, ծեռնարկությունները օֆշոր գոտիներում գրանցելով և հետևի դժուկ նույն գումարները Հայաստանում վերաներդնելով։ Այլ բաներից զատ՝ սա հնարավորություն է տալիս նրանց օգուտ քաղել օրենքով արտաքին ներդրումներին տրված արտօնություններից և օգտագործել պաշտոնական գրասենյակը իրենց բիզնեսի լորբինգի համար։ Բացի ադմինիստրացիայի աշխատակիցների իրականացրած օրինախախտումների վերաբերյալ բազմաթիվ ոչ պաշտոնական փաստարկների՝ վերջին տարիներին ֆինանսական կեղծիքների կամ փողերի լվացման ոչ մի դեպք չի ներկայացվել հասարակության ուշադրությանը։ Գործակալությունը, որը գրադարձում է փողերի լվացման հարցերով, պետք է լինի անկախ, իսկ նրա աշխատակիցների փոխհատուցումը՝ կատարողականի վրա հիմնված։

**Վերջին իրադարձությունները,** կապված սփյուռքից ներդրողների ադմինիստրատիվ հետապնդումների հետ, կրիտիկական հարված էն Հայաստանի և սփյուռքի փոխհարաբերություններին։ Հետագա հակասություններից խուսափելու և սփյուռքի ներուժը ավելի լավ օգտագործելու նպատակով՝ մենք առաջարկում ենք սփյուռքի կողմից վարվող անկախ հանձնաժողովի ձևավորում, որին պարբերաբար կիամենարարվի իրականացնել Հայաստանի բիզնես միջավայրի գևահատում և ՀՀ-ում քաղծառայության համակարգում բարձր պաշտոններ գրադարձում ավելացնելու նպատակով սփյուռքահայ թեկնածուների ցուցակի կազմում։

## Հարկաբյուջետային միջոցառումներ

**Բյուջեից արտահոսքը և կաշառակերությունը** բյուջետային գործընթացում պետք է կասեցվեն։ Պետական գնումների ավելի մեծ մասը պետք է հրականացվի մրցակցային անոլորների միջոցով, և պետք է նվազեցվի պետական պաշտոնյաների հետ փոխկապակցված ֆիրմաների մասնակցությունը։ Դատախազությունը պետք է իրավական գործընթաց հարուցի վերահսկի պալատի վերջին հաշվետվությունում բացահայտած իրավախախտումների դեմ։ Առևվազն եռամսյակը մեկ այս գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն պետք է տրամադրվի Ազգային ժողովին։

**Հարկային և մաքսային եկամուտների թերիավագրագրումը** պետք է բարելավվի ի սկզբանե, առանց հապաղումների։ Սա պետք է սկսվի Պետական եկամուտների կոմիտեի և մաքսային մարմինների անձնակազմի և դեկավարության արմատական փոփոխություններով։ Վերը նշված կոմիտեները, բացի կոռուպացված լինելուց, իշխող ռեժիմի կողմից օգտագործվել են որպես գործիք քաղաքական հաշվեհարդարներ տեսմենու համար։ Հարկադրանքի լրացրցից ուժով ամրապնդված՝ վերակազմավորված գործակալությունը պետք է իր առջև ունենա միջազգային պրակտիկայում ընդունված և ՀՀ հարկային ռեժիմի ներք կիրառելի թիրախներ։ Ընդ որում, գործակալության բարձրաստիճան պաշտոնյաները պետք է հեռացվեն, եթե առաջին իսկ տարվա կատարողականը զգայիրեն զիջի սահմանված թիրախները, իսկ միջին և ցածր դասի աշխատողները պետք է վարձվեն կարճ ժամանակահատվածով և վճարվեն ըստ կատարողականի։

Ի լրումն հարկադրանքի ուժին՝ **հարկային և մաքսային կանոնները պետք է լինեն պարզեցված, ոչ սուբյեկտիվ և ավելի քիչ ուղղված լինեն շահույթ փնտրելուն։** Պետք է նկատել, որ օրենքով սահմանված հարկադրույթների բարձրացումը և հարկահավաքման խստացումները այն անհատների և ձեռնարկությունների նկատմամբ, որոնք արդեն զգալի բեռի տակ են, ավելի կիսաթարի տևտեսական

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ակտիվությունը և կամրապնդի այն գիտակցությունը, որ ՀՀ հարկային համակարգը անարդար է:

Հարկահավաքման և ծախսերի կառավարման այս մոտեցումները զգալի ֆիսկալ կարողություններ կստեղծեն՝ տարեկան հարյուր միլիոնավոր դրամներ, որոնք կարող են ուղղվել ենթակառուցվածքների զարգացմանը, կրթությանը, հետազոտություններին և զարգացմանը, սոցիալական անվտանգությանը և պաշտպանությանը: Ծախսերի այս հոդվածները ընդհանուր առմամբ մոտը են թերֆինանսավորված, և խնդրի լուծման այս ճանապարհը ՀՀ հետագա աճի և բարգավաճման միակ հապճեպ և խելամիտ ուղին է:

## Դրամավարկային և փոխարժեքի կառավարման քաղաքականություններ, Փինանսական հատված

Չնայած 2009 թվականի դրամի արժեգրկմանը՝ ՀՀ տնտեսությունը ամբողջականորեն չճգրտվեց ճգնաժամից ի վեր: Բանի դեռ ամբողջական ճգրտում տեղի չի ունեցել, տնտեսությունում կշարունակվի արտաքին պահուստների կորուստը, պարուքի կուտակումը, և Հայաստանը անկարող կլինի աճել: Ճգրտումը պետք է կատարվի փոխարժեքի աստիճանաբար արժեգրկմամբ՝ 1-1.5 տարվա ընթացքում, որպեսզի խուսափենք բանկերի հաշվեկշռի և արտարժույթով վարկ վերցրած վարկառուների վրա բացասական ազդեցություններից, որոնք ի հայտ կգային հանկարծակի արժեգրկման պարագայում: Նկատի ունենալով ՀՆԱ ճեղքը և վերջնական արժեգրկմամբ պայմանավորված՝ Ներմուծման ծավալների կրճատում՝ փոխարժեքի Եֆեկտիվ ազդեցությունը գերի վրա փոքր կլինի: Փոխարժեքի փաստացի ամրագրումից հրաժարումը կուժեղացնի նաև դրամավարկային փոխանցման ուղին՝ դարձնելով դրամավարկային խթանումներն արդյունավետ ներկայի համեմատ, եթե դրանք սնում են գնածն ու ռեզերվներ վատնում:

Բանկային համակարգի ներկայիս զարգացումները չեն կարող երկար տևել: Վարկավորման հետագա ընդլայնումը պետք է կշռվի Փինանսական անկայունության ռիսկերով և գալիք սոցիալական տագնապով: Իրավիճակը կծանրանա, եթե բանկերից պահանջվի փակել իրենց արտաքին վարկային գծերը, կամ եթե բանկերը դժվարանան դրամք վերակաբել: Իրավիճակ, որն առկա է Արևելյան Եվրոպայում: Եվրոպական զարգացումներից զատ՝ իրարանցումը կարող է տեղի ունենալ նաև բանկերի վարկավորման պորտֆելի շարունակական վատացման հետագա, ներսի և դրսի զարգացումներով պայմանավորված, ավանդատուների կարծիքի փոփոխության արդյունքում:<sup>22</sup>

## Կառուցվածքային բարեփոխումներ

Մրցունակություն ապահովելու համար՝ ՀՀ տնտեսական աճը պետք է արտադրողականության և նորարարությունների վրա հիմնված լինի: Սակայն երկրի կարևորագույն ներուժը գիտության և տեխնոլոգիայի բնագավառում լրջորեն վտանգված է՝ բնակչության մեծածավալ արտահոսքի և բարձրագույն կրթության նկատմամբ երկրի դեկավարության բացարձակ անտարեր վերաբերմունքի պայմաններում: Որպեսզի որոշակիորեն հաղթահարվի խնդիրը, ավելորդ վարչարարական խոշընդուների վերացումից և բիզնես միջավայրի բարեւավումից բացի, Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի նորարարությունների խթանուման առումով, օրինակ՝ տեխնոլոգիական կենտրոնների

<sup>22</sup> Վարկանշի շնորհող միջազգային գործակալությունների կողմից ՀՀ վարկանշի հետագա նվազեցումը (որն ինքնին ազդում է նաև բանկերի վրա) կարող է պարտատերերի կողմից հավելյալ գրավի կամ բարձր տոկոսավճարների պահանջ առաջացնել:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ստեղծում, նորարարություններին ուղղված ֆինանսավորման աճ, և ձեռնարկատիրական փորձի փոխանակման և ամրավորման նկատառությունը՝ տևականության թիրախային բնագավառներում սփյուռքի մասնագետների ներառում տեղային բիզնեսներում:

**Մրցակցության աճը** փակ մենաշնորհային ոլորտներում կիանգեցնի նոր և ավելի շահութաբեր շուկաների բացահայտման: Միևնույն ժամանակ, այն միանշանակորեն կիանգեցնի անվանական ցուցանիշների ավելի ճկուն վարքագիր, որոնք կակտեն աշխատել դրանք շոկեր կլանողներ, այլ ոչ թե շոկեր ուժգնացնողներ:

**Հանրարդյունաբերության ոլորտի կտրուկ ընդլայնումը,** որն այժմ կառավարության առաջնահերթություններից Ե՛նախկինում հաճ շինարարության ոլորտի փոխարեն, պետք է անմիջապես կասեցվի մինչև (i) բյուջեի բոլոր հոսքերի ճանաչումը, (ii) որոշիչ ձեռնարկությունների սեփականատերերի կառուցվածքը թափանցիկ դարձնելը (նպատակ ունենալով իրավական դաշտ բերել նրանց, ովքեր հանքարդյունաբերության բնագավառում շահ են ունեցել պետական պաշտոն վարելուն համընթաց) և (iii) վստահելի և բավարար բնապահպանական երաշխիքներ հաստատելը: Կառավարությունը պետք է գիտակցի, որ բնական հարստության պահպանումը գալիք սերնդի համար կամ մինչ այն պահը, երբ հանքարդյունաբերության բնագավառում նորագոյն տեխնոլոգիաների կիրառումը հնարավոր կդառնա, տևական կենսունակ որոշում Ե՛ հաշվի առնելով մի շարք տևասփինանսական ենթադրություններ և պայմաններ:



# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԵՐ

Մինչ տնտեսությունը կենսունակ դարձնելու և ժողովրդի վստահությունը վերականգնելու համար Հայաստանից պահանջվում են եական փոփոխություններ, սա չի կարող տեղի ունենալ առանց քաղաքացիական հասարակության գգալի ճնշումների՝ թէ՛ ներսի, թէ՛ սփյուռքի և թէ՛ հիմնական վարկատուների՝ ԱՄՆ-ի և Համաշխարհային բանկի կողմից: Վերջիններս պետք է հրաժարվեն անառամ ծրագրերին բնորոշ, բարոյական վտանգը ուժգնացնող և բարեփոխումների շարժակիթները թուլացնող քաղաքականությունից՝ հօգուտ ավելի կոշտ և արդյունավետ դիրքորոշման՝ ուղղված քաղաքական խուսափողականության և բարեփոխումների նկատմամբ քաղաքական կամքի բացակայության դեմ:<sup>23</sup> Հաջող երեք տարիների ընթացքում լրացած արտաքին պետական պարտքի վերաձևակերպումը, առանց քաղաքականության ուղղությամբ գգալի փոփոխությունների, հավասարագոր է հին տեսանկյունը հետապնդելուն, որից ամեն գնով հարկավոր է խուսափել:

Վերջերս ՀՅ Դաշնակցությունը՝ նախկինում կոպահայի գործնկեր, իսկ ներկայում խորհրդարանական ընդդիմադիր կուսակցություն, կառավարության հրաժարականի կոչ էր արել: Մենք հավատում ենք, որ այս քայլը, եթե անգամ ձեռնարկվի, գործեք ոչչի չի հանգեցնի, բանի դեռ քաղաքական փոփոխությունները բարձր ատյաններում տեղի չեն ունեցել: Այս, ինչ պահանջվում է առաջ շարժվելու համար, ոչ այլ ինչ է, քան հիրավի ազգային միասնական կառավարություն, որը կունենա աշխատունակ օրակարգ և կկարողանա ի մի բերել բոլոր կառուցողական ուժերը՝ լինեն դրանք Հայաստանում, թէ սփյուռքում: Այս շանթերն ել իրենց հերթին պահանջում են մասնագիտական հավաստիք և հիրավի ազգային և մաքուր քաղաքական դեկավարություն, որը, ցավոք, Հայաստանում բացակայում է այս պահին:

<sup>23</sup> Այս փաստը, որ ԱՄՆ վերջին հաշվետվությունում տեղ էր գտել Նաիրիտի հարցը, խոսում է այն մասին, որ միջազգային ֆինանսական հաստատություններում վորովմունք է բարձունում ՀՅ տնտեսական հարցերի կառավարման որակի առումով: Սա, թերևս, ամենակարևոր փոփոխությունն է, որը տեղի է ունեցել 2008 թվականից ի վեր:

# ՀԱՎԵԼՎԱԾ: ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԽՈՑԵԼԻՌՅՈՒՄ, 2010-14


(Միլիարդ դրամ, եթե այլ բան նշված չէ)

	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>	<b>2014</b>
<b>Բազային սցենար</b>					
ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	734.3	840.4	888.4	972.8	1,057.5
ԾԱԽՍԵՐ	906.6	980.9	1,019.9	1,076.3	1,226.1
ԴԵՖԻՑԻՏ	-172.3	-140.5	-131.5	-103.5	-168.6
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ճԵՂՋ	0.0	0.0	0.0	64.2	80.0
ՊԱՐՏՅ/ՀՆԱ (%)	39.2	40.0	43.1	41.8	38.5
ԱՍՎԱՆԱԿԱՆ ՀՆԱ	3,502.0	3,871.0	4,219.0	4,583.0	4,978.4
ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ (%)	9.2	5.7	4.8	4.4	4.4
ԻՐԱԿԱՆ ՀՆԱ Աճ (%)	2.1	4.6	4.0	4.0	4.0
<b>Ծոկային սցենար I (Իրական ՀՆԱ-ն անփոփոխ է)</b>					
ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	734.3	840.4	825.2	841.7	893.0
ԾԱԽՍԵՐ	906.6	980.9	1,019.9	1,076.3	1,226.1
ԴԵՖԻՑԻՏ	-172.3	-140.5	-194.7	-234.6	-333.1
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ճԵՂՋ	0.0	0.0	63.2	195.3	244.5
ՊԱՐՏՅ/ՀՆԱ (%)	39.2	40.0	47.7	50.8	48.7
ԱՍՎԱՆԱԿԱՆ ՀՆԱ	3,502.0	3,871.0	3,948.4	4,027.4	4,272.7
ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ (%)	9.2	5.7	2.0	2.0	3.0
ԻՐԱԿԱՆ ՀՆԱ Աճ (%)	2.1	4.6	0.0	0.0	3.0
<b>Ծոկային սցենար II (Իրական ՀՆԱ-ն նվազում է)</b>					
ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	734.3	840.4	776.3	791.8	840.0
ԾԱԽՍԵՐ	906.6	980.9	1,019.9	1,076.3	1,226.1
ԴԵՖԻՑԻՏ	-172.3	-140.5	-243.6	-284.5	-386.1
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ճԵՂՋ	0.0	0.0	112.1	245.2	297.5
ՊԱՐՏՅ/ՀՆԱ (%)	39.2	40.0	52.0	55.3	53.1
ԱՍՎԱՆԱԿԱՆ ՀՆԱ	3,502.0	3,871.0	3,714.2	3,788.5	4,019.2
ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ (%)	9.2	5.7	1.0	2.0	3.0
ԻՐԱԿԱՆ ՀՆԱ Աճ (%)	2.1	4.6	-5.0	0.0	3.0
<b>Ծոկային սցենար III (Դրամն արժեգրկվում է 30 տոկոսով)</b>					
ՊԱՐՏՅ/ՀՆԱ (%)	39.2	40.0	54.4	56.5	58.6
ԴՐԱՄ/ԱՄՆ ԴՈԼԱՐ	363.4	375	487.5	509.2	531.8
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՅԻ ԿԾԻՌՈ	87.4	87.5	87.4	85.2	85.2

Նշում՝ կանաչով նշվածները եկղոգեն ենթադրություններ են, ոեղինով նշվածները պարունակում են հաշվարկներ: Պարզության համար ծախսումները ենթադրվում են անփոփոխ՝ ի համեմատ բաղկային սցենարի: Պարտքի դինամիկան ենթադրվում է 100 տոկոս վերաթողարկում: Բազային սցենարը վերցվել է ԱՄՆ (2011)-ից:

# ՀՐԱՄԱՆԵՐ

- Davoodi, H. and D. Grigorian (2007). "Tax Potential vs. Tax Effort: A Cross-Country Analysis of Armenia's Stubbornly Low Tax Collection," IMF Working Paper No. 07/106. Available via: <http://www.imf.org/external/pubs/cat/longres.aspx?sk=20642.0>.
- Finger, H. and M. Mecagni (2007). "Sovereign Debt Restructuring and Debt Sustainability: An Analysis of Recent Cross-Country Experience," IMF Occasional Paper 255, Washington D.C.
- Fitch Ratings (2011). "Armenia: Full Rating Report," September. Available via: [www.fitchratings.com](http://www.fitchratings.com).
- IMF (2011). (Armenia) Country Report No. 11/366. Available via: <http://www.imf.org/external/pubs/cat/longres.aspx?sk=25455.0>.
- IMF (2010). "How does Armenia's Tax Revenue Compare to Its Peers?" Mimeo. Available via: [www.imf.org/Yerevan](http://www.imf.org/Yerevan) (under "Analysis" section).
- Institute for War and Peace Reporting (2011). "Alarm at Rising Suicide Rate in Armenia," June 17. Available via: <http://www.unhcr.org/refworld/docid/4e0070ff2.html>.
- KPMG (2011). "Corporate & Indirect Tax Survey 2011." Available [here](#).
- National Statistical Service (2011). "Main Findings of the 2010 Integrated Living Conditions Survey," Press Release, November. Available [here](#).
- Policy Forum Armenia (2010). "Armenia-Diaspora relations: 20 Years Since Independence," a State of the Nation Report. Available via: [www.pf-armenia.org/reports](http://www.pf-armenia.org/reports).
- Policy Forum Armenia (2008). "Implications of the World Financial Crisis for Armenia's Economy," PFA Special Report. Available via: [www.pf-armenia.org/reports](http://www.pf-armenia.org/reports).
- World Bank (2009). "Armenia—Country Procurement Assessment Report." Available [here](#).



## **Policy Forum Armenia**

**1250 I (Eye) Street N.W., Suite 710  
Washington, D.C. 20005, USA  
[forum@pf-armenia.org](mailto:forum@pf-armenia.org)**

**[www.pr-armenia.org](http://www.pr-armenia.org)**